

ԱՐԵԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

(Նուէր տանջուող սրտին)

Ողջոյն քեզ... Արեան հայրենիք.
Որ բուրբեցիր արիւնոտ մի դար,
Եւ այսօր կրկին, թո դարէ ի դար
Սևագիր բախտիդ հըլու հնազանդ,
Թեակոխում ես էլ մի կարմիր դար:

Ողջոյն քեզ... Արեան հայրենիք.
Որ մարգարտահոս վրտակդ օրն ի բուն
կարմիր է կտրել, հոսում է արիւն.
Որ հասկաշատ արտ. ծառ ու ծաղիկներդ
Ցստակ ջրբի տեղ խմում են արիւն...

Ողջոյն քեզ... Արեան հայրենիք.
Որ չուսուացած հարադատներից
Անպարտ ու անարգ սև ճակատագրիդ
Գերի դարձրած՝ մաշում ես անվերջ
Ու արցունքն առնտ, հրդեհն է անշէջ:

Ողջոյն քեզ... Արեան հայրենիք.
Որ գեղածիծաղ թո հովիտներում
Դաժան բընազղը աւեր է սփռում.
Եւ դու անտարբեր թո իսկ զաւակիդ
Արեան ծարաւի՛ դեռ լնւո ես մընում...

Ողջոյն քեզ... Արեան հայրենիք
Որ հսկայագործ տաճարդ ամայի
Հովիւն է անզօր հանդէպ մերկ սրի,
Շէնքերդ լափում է մի անյադ կրակ.
Ինչո՞վ մենք եղանք դըրան արժանի:

Ողջոյն քեզ... Արեան հայրենիք.
Որ արիւնխում մի կարմիր մըրիկ
Գըրում է բախտիդ սև դատակնիք...
Այդ թնչ օր բերիք սև արև ազգիս,
Դնւ, դրախտանըման իմ Հայ հարենիք:

Ողջոյն քեզ... Արեան հայրենիք.
Որ անագորոյն մի խաւար ոգի
Արիւն ու աւեր է շնչում քեզի.
Մինչև երբ այդպէս, անբախտ հայրենիք,
Սուրը մեր գլխին անպատիժ լինի...

Ողջոյն քեզ... Արեան հայրենիք
Թող
Թող որ մեր սրտերն արդէն վիրաւոր,
Արդէն սևաւոր բախտին խաղալիք՝
Գոնէ բողբեն... ձայնով ահաւոր
Ճակատիդ դրոշմեն... — «Արեան հայրենիք»...
ԳԱՆՈՒՄՏ